ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2013 թվականի N181-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԼՎԱՆՔ, ԵՂԵԳ, ԼԵՀՎԱԶ, ՆԺԴԵՀ, ՆՈՆԱՁՈՐ, ՎԱՐԴԱՆԻՁՈՐ ԵՎ ՏՈՐՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի «2014 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N140-Ա որոշման 1-ին կետի, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ալվանք և Նժդեհ գյուղական համայնքներում համայնքի ղեկավարի, իսկ Եղեգ, Լեհվազ, Նռնաձոր, Վարդանիձոր և Տորունիք գյուղական համայնքներում համայնքի ղեկավարի ու համայնքի ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2014 թվականի մարտի 9-ին:
2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համայնքների նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ստանձնման օրն է 2014 թվականի հունիսի 24-ը:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. դեկտեմբերի 23
ք. Կապան